

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ АРМЯНСКОГО РЫНКА ВОДКИ

Н. А. Тадевосян

В настоящей статье представлены и проанализированы тенденции развития рынка водки в РА, акцентируется внимание на тенденциях рынка местной водочной продукции. Рассмотрены факторы имевшие влияние на развитие и дальнейшее падение рынка. Выдвинуты предложения по динамическому развитию данной сферы.

THE DEVELOPMENTS OF ARMENIAN VODKA MARKET AND PRESENT PROBLEMS

N. H. Tadevosyan

In this article the developments of vodka market in Republic of Armenia it's introduced and analyzed paying attention mainly to local vodka market development. Some factors were discussed which had influenced the development of that sphere and its fall. The suggestions have been done for dynamic development of the sphere.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱԾԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ 1999-2010 ԹԹ.

Ս. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ
ԳԴՀ լաբորանտ

Պետության մակրոտնտեսական կայունության և զների կայուն մակարդակի ապահովման համար կարևոր նշանակություն ունեն վճարային հաշվեկշռի տարրերի կառուցվածքում կատարվող փոփոխությունները: Առավելապես կարևորվում է արտարժույթային հոսքերի՝ որպես փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնի ուսումնասիրությունը, առանց որի վտանգավոր և անիմաստ է դրամավարկային քաղաքականությունը իրականացնելը: Վճարային հաշվեկշռն իրենից ներկայացնում է տվյալ երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների քանակական և որակական գնահատականը: Այն նաև արտացոլում է տվյալ պետության կախվածությունը արտաքին ֆինանսավորման աղբյուրներից: Ահա թե ինչու ժամանակի ընթացքում ընթացիկ հաշվի հավասարակշռումը կարևոր տնտեսական նպատակ է՝ ի լրումն բարձր տնտեսական աճի, ցածր գործազրկության և ցածր գնաճի նպատակների:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում փորձել ենք բացահայտել, թե արտաքին տնտեսական հարաբերություններն ու ընթացիկ հաշվի անհաշվեկշռվածությունը ինչպիսի ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետությունում զների մակարդակի և տնտեսության ներքին և արտաքին մրցունակության վրա: Այդ զարգացումները պայմանավորված են համաշխարհային տնտեսական

աճի տեմպերով, էներգակիրների և այլ ապրանքների համաշխարհային գների մակարդակով, ինչպես նաև Հայաստանի տնտեսական աճի տեմպերով և մակրոտնտեսական այլ գործոններով:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում արտաքին տնտեսական գործոնների ազդեցությունները միանշանակ չեն եղել: Այդ զարգացումներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ առևտրային և ընթացիկ հաշվի հաշվեկշիռներում (աղյուսակ 1):¹

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից՝ 1999-2002թթ. ՀՀ տնտեսության արտաքին հատվածում նկատվել են դրական միտումներ, որը ներմուծման նկատմամբ արտահանման տեմպերի առաջանցիկ աճի արդյունք էր: 2002թ. ապրանքների արտահանումը դոլարային արտահայտությամբ 1999թ. համեմատ ավելացավ 110 տոկոսով, իսկ ներմուծումը ընդամենը՝ 23 տոկոսով (շուրջ հինգ անգամ ավելի քիչ), որը հանգեցրեց առևտրային հաշվեկշռի բարելավմանը (1999թ. առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմում էր ՀՆԱ-ի 48 տոկոսը, իսկ 2002թ.՝ 22 տոկոսը):

Աղյուսակ 1

Առևտրային հաշվեկշիռը և ընթացիկ հաշիվը 1999-2010թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Առևտրային հաշվեկշիռ											
-474,0	-463,5	-420,2	-368,8	-434,1	-458,0	-587,9	-895,9	-1600,3	-2883,5	-2081,3	-2141,8
Արտահանում											
247,3	309,9	353,1	513,8	696,1	738,3	1004,9	1025,5	1196,6	1112,0	748,9	1113,2
Ներմուծում											
-721,3	-773,4	-773,3	-882,5	-1130,2	-1196,3	-1592,8	-1921,3	-2796,9	-3775,6	-2830,1	-3255,0
Ծառայությունների հաշիվ											
-62,0	-55,8	-17,8	-40,7	-68,3	-98,9	-120,0	-130,4	-212,5	-327,1	-268,1	-241,0
Ընթացիկ տրանսֆերտներ											
174,1	188,1	174,0	173,4	218,5	429,8	523,7	694,0	944,8	1137,6	813,9	924,0
Ընթացիկ հաշիվ											
-306,9	-278,4	-199,6	-147,9	-189,4	-19,6	-51,7	-117,1	-569,3	-1361,8	-1368,9	-1300,1

Չնայած արձանագրված դրական միտումներին, վերը նշված 4 տարիներին արտահանված ապրանքների անվանացանկը շատ ավելի փոքր էր, քան ներմուծմանը (այս երևույթը պահպանվել է նաև հետագա տարիներին): Ընդ որում, արտահանման մեջ մեծ էր հատկապես «թանկարժեք և կիսաթանկարժեք քա-

¹ Աղբյուր՝ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք: www.cba.am

րեր, մետաղներ և դրանցից իրեր» հողվածի տեսակարար կշիռը, որը այս տարիներին տատանվել է արտահանվող ապրանքների արժեքի 40-51 տոկոսի սահմաններում: Իսկ չորս խումբ ապրանքատեսակները՝ «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր», ապահովել են ընդամուր արտահանման ծավալի (դոլարային արտահայտությամբ) 74-79 տոկոսը: 2003 թվականից արտահանման կառուցվածքում առկա վերը նշված խնդիրներին զումարվեց արտահանման աճի տեմպերի նվազումը և ներմուծման աննախադեպ բարձր աճը: 2003 թվականից արտահանման կառուցվածքում հատկապես մեծացել է «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հողվածի տեսակարար կշիռը, որը 2005թ. կազմեց ընդհանուր արտահանման 35 տոկոսը: Արտահանումը 2003-2007թթ. դոլարային արտահայտությամբ աճել է 65.5 տոկոսով:

2008թ. (մասնավորապես չորրորդ եռամսյակից) արտահանման դանդաղ աճի տեմպը փոխվեց անկման, իսկ 2009թ.՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում, արտահանման դոլարային ցուցանիշը (ընթացիկ գներով) նախորդ տարվա համեմատ նվազեց ավելի քան 30 տոկոսով՝ իջնելով ավելի ցածր մակարդակի, քան 2003թ. համապատասխան ցուցանիշը: Նշենք նաև, որ 2009 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների անկումն ավելի խորն էր, որը չորրորդ եռամսյակում որոշ չափով կրճատվեց համաշխարհային շուկայում պղնձի գների բարձրացման հաշվին (այս եռամսյակում Լոնդոնի մետաղների բորսայում պղնձի գինը բարձրացավ 13.5 տոկոսով): 2010 թվականին արդեն արտահանման ծավալի աճ արձանագրվեց, սակայն դեռևս նախաճգնաժամային՝ 2007 թվականի ցուցանիշին հասնել չհաջողվեց: Տնտեսական աշխուժացումը և արտասահմանից ներհոսող մասնավոր տրանսֆերտների աճը հանգեցրեցին նաև ներմուծման ծավալների ավելացման: Ի տարբերություն արտահանվողների, ներմուծվող ապրանքների տեսականին անընդհատ ընդլայնվել է: Ուստի կարող ենք ասել, որ Հայաստանը վերածվել է առավելապես ներմուծող կամ սպառող երկրի:

Պետք է նշել, որ արտերկրից ստացվող տրասֆերտները զգալիորեն մեծացնում են բնակչության եկամուտները՝ մեղմելով սոցիալական իրավիճակը: Միաժամանակ, մասնավոր տրասֆերտների զգալի ծավալները որոշակի ճնշում են գործադրում աշխատանքի շուկայի վրա, ինչն արտահայտվում է տնտեսական ակտիվության նվազմամբ և աշխատուժի գնի ավելացմամբ՝ իջեցնելով երկրի մրցունակությունը միջազգային շուկայում:

Այսպիսով, 2003 թվականից սկսած մասնավոր տրասֆերտների մեծածավալ ներհոսքը և տնտեսական աճը հանգեցրեցին բնակչության եկամուտների ավելացման՝ խթանելով ներքին պահանջարկը: Եվ քանի որ տնտեսական աճի համեմատ արդյունաբերության և գյուղատնտեսության աճի տեմպերը զգալիորեն ցածր էին, ուստի ներքին պահանջարկի մեծացումը հանգեցրեց ներմուծման ծավալների արագ աճի: Արդյունքը եղավ այն, որ 2008-2010թթ. ՀՀ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդները կազմեցին ՀՆԱ-ի մոտ 30 տոկոսը:


Զնայած ծառայությունների արտահանումն ավելի արագ տեմպով է աճել, այնուամենայնիվ ծառայությունների հաշիվն այս տարիներին ևս բացասական է

եղել, և բացասական մնացորդը բացարձակ արժեքով խորացել է: Ինչպես առևտրային հաշվեկշիռը, ծառայությունների հաշիվը 2009 և 2010թթ. բացարձակ արժեքով նվազել է:

Գնաճի վրա ազդող ոչ պակաս կարևոր գործոն են մաս պետության կողմից արտաքին աղբյուրներից ստացվող վարկերը, որոնց ծավալները ներկայացված են գծանկար 1-ում:

Ինչպես տեսնում ենք, ՀՆԱ-ում արտաքին պետական պարտքի նվազման տենդենցը 2009թ. կտրուկ փոխվեց: Սա այն «գինն» էր, որով կառավարությունը 2009 թվականի չորրորդ եռամսյակում նվազեցրեց տնտեսական անկումը: Բնական է, որ արտաքին պետական պարտքի կրկնակի ավելացումը 1 տարվա ընթացքում բարձր գնաճի նախադրյալ ստեղծեց: Արտաքին պարտքի մեծացումը, չնայած փոքր տեմպերով, շարունակվեց մաև 2010 թվականին, որի արդյունքում արտաքին պետական պարտքի կշիռը ՀՆԱ-ում 2010 թ. վերջին կազմեց շուրջ 36 տոկոս:

Արտարժութային հոսքերի ավելացման հիմնական աղբյուր են հանդիսանում մաս օտարերկրյա ներդրումները: Հայաստանում հիմնականում իրականացվում են օտարերկրյա ուղղակի ներդրումներ: Պորտֆելային ներդրումները շատ փոքր կշիռ ունեն և հաճախ բացասական մեծություն են կազմում: Օտարերկրյա ուղղակի ներդրումները 1999-2008 թթ. շուրջ 7.6 անգամ ավելացել են՝ 2008թ. հասնելով 925.2 մլն դոլարի, սակայն 2009-2010թթ. դրանք կտրուկ նվազել են՝ յուրաքանչյուր տարի մոտ 22 տոկոսով: Այսպիսով՝ օտարերկրյա ներդրումները ևս /ինչպես օտարերկրյա վարկերը/ խթանել են ամբողջական պահանջարկը՝ առաջացնելով գնաճային ճնշումներ:



Վճարային հաշվեկշռի ազդեցությունը գների վրա արտահայտվում է ոչ միայն ամբողջական պահանջարկի, այլև փոխարժեքի փոփոխությամբ: Այստեղ պետության, մասնավորապես, կենտրոնական բանկի քաղաքականությունը իր ար-

տահայտությունն է գտնում համախառն միջազգային պահուստների կառավարման մեջ: Այսպես, 2003 թվականից մինչև 2007 թվականի վերջը համախառն միջազգային պահուստները ավելացել են 2.8 անգամ: Նույն ժամանակահատվածում դրամը արժևորվել է շուրջ 47 տոկոսով: Պահուստների համալրումը մեծ չափով շարունակվեց նաև 2009 թվականին /2009թ. դեկտեմբերին աճել է 43 տոկոսով՝ 2008թ. դեկտեմբերի նկատմամբ/: Ընդ որում, դրամի արժևորման գործընթացը երեք տարում (2005-2007թթ.) մոտ երկու անգամ ավելացրել է ՀՀ-ում արտարժույթով չափվող կյանքի արժեքը, իսկ անվանական աշխատավարձերը դոլարային արտահայտությամբ 2003-2008թթ. աճեցին շուրջ 4.5 անգամ՝ դրամային անվանական արժեքով 1.8 անգամի համեմատ, որն ուղղակիորեն ազդել է երկրի մրցունակության վրա՝ արագ վերացնելով ցածր աշխատավարձերի ժամանակավոր մրցակցային առավելությունը և բացասական ազդեցությունը թողնելով արտահանման վրա: Այսպիսով, արտաքին առևտրի պայմանների փոփոխման հիմնական գործոններ են համարվում տվյալ երկրում և գործընկեր երկրներում գնաճի և փոխարժեքի ցուցանիշների փոփոխությունները, որոնք իրենց արտացոլումն են ստանում իրական արդյունավետ փոխարժեքում:

Իրական արդյունավետ փոխարժեքի հաշվարկային բանաձևը հետևյալն է (այն կիրառվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից)։

$$PUS_i = H_{i=j} \left[\frac{UP_i \times UqH_i}{UP_j \times UqH_j} \right] Y_{ij}$$

որտեղ՝

$H_{i=j}$ - արտադրյալ,

PUS_i - երկրի իրական արդյունավետ փոխարժեք,

UqH_i - i և j - երկրների սպառողական գների ինդեքսներ,

UP_i - i և j - երկրների ուղղակի անվանական փոխարժեքներն ԱՄՆ դոլարով,

Y_{ij} - մրցակցային կշիռներ, որոնք հիմնված են i և j երկրների առևտրի շրջա-

նառության ծավալների վրա:

Ինչպես երևում է վերոնշյալ բանաձևից, տվյալ երկրի սպառողական գների ինդեքսի և անվանական փոխարժեքի աճը կամ դրանց նվազումը գործընկեր երկրներում հանգեցնում է այդ երկրի իրական արդյունավետ փոխարժեքի աճի (արժեքավորման), որը նշանակում է պայմանների բարելավում՝ ներմուծման և վատթարացում՝ արտահանման համար: Վերջին տասնամյակի ընթացքում այս տեսությունը իր ճշմարտացիությունը ապացուցեց նաև մեր երկրում, ինչը ներկայացված է գծանկար 2-ում:


Այսպես, ՀՀ արտահանման ծավալները 2008թ. դրամային արտահայտությամբ 2003թ. համեմատ նվազել է շուրջ 19 տոկոսով, այն դեպքում, երբ այդ ընթացքում դոլարային արտահայտությամբ արտահանումը ավելացել է 53.5 տոկոսով:

Արժույթի արժևորման դեպքում դրսևորվում են երկու հակադիր ազդեցություններ. գնային և ծավալային ազդեցություն /էֆեկտ/: Գնի էֆեկտը կայանում է նրանում, որ արժևորման արդյունքում արտահանումը թանկանում է, ներմուծումը՝ էժանանում, ինչը դրականորեն է անդրադառնում առևտրային հաշվեկշռի

վրա: Իսկ ծավալի էֆեկտը կայանում է նրանում, որ արտահանման թանկացումը նվազեցնում է արտահանումը, իսկ ներմուծման էժանացումը ընդլայնում է այն, ինչը բացասականորեն է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա:

Այսպիսով՝ վճարային հաշվեկշռի և փոխարժեքի ազդեցությունը գնաճի և տնտեսական աճի վրա միանշանակ չէ և այն կարող է նաև տարբեր ժամանակահատվածներում տարբեր արդյունավետություն ունենալ: Ոչ պակաս կարևոր է առաձգականության տեսության դրույթների կիրառումը /Ա. Մարշալ, Ա. Լերներ/, ըստ որի առևտրային հաշվեկշռի վրա փոխարժեքի փոփոխման ազդեցությունը կախված է արտահանվող և ներմուծվող ապրանքների առաջարկի և պահանջարկի գնային առաձգականություններից:

Գծանկար 2



Վերջին տասներկու տարիների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- մասնավոր տրանսֆերտների ներհոսքը կարճաժամկետ հատվածում լուծում է որոշ սոցիալական խնդիրներ, բայց միաժամանակ ստեղծում է գնաճային ճնշումներ, ինչպես նաև արագացնում է նաև աշխատավարձերի բարձրացման միտումները, որն այլ հավասար պայմաններում նվազեցնում է երկրի մրցունակությունը,

- մրցունակության նվազման, ինչպես նաև պետական տնտեսական քաղաքականության բացթողումների արդյունքում է Հայաստանը վերածվել առավելապես ներմուծող կամ սպառող երկրի,

- մեծ է երկրի ֆինանսական կախվածությունը արտաքին աշխարհից,

- արտաքին պարտքի առաջանցիկ աճը հանգեցրել է ՀՆԱ-ում դրա տեսակարար կշռի մեծացման, որը նույնպես գնաճային ճնշումներ է թողնում՝ միաժամանակ նվազեցնելով երկրի վարկանիշը:

Վերը նշված բացասական երևույթները մեղմելու համար տնտեսական քաղաքականությունը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պայմանները.

1. Գնաճի մակարդակի կայունացման լավագույն միջոցը ամբողջական առաջարկի աճն է: Հետևաբար, պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղվի տնտեսության իրական հատվածում, մասնավորապես՝ արտահանելի հատվածում ներդրումների խրախուսմանը: Նման ծրագրերի ֆինանսավորման աղբյուր ապագայում կարող են ծառայել կենսաթոշակային հիմնադրամի հավաքագրած միջոցները:

2. Ստացված արտաքին պետական վարկերը ուղղել արտահանելի հատվածի զարգացմանը, քանի որ այդ հատվածի զարգացման արդյունքում կարող ենք հետագայում կատարել վարկային պարտավորությունների մարում:

3. Արժույթային քաղաքականություն իրականացնելիս անհրաժեշտ է կատարել հնարավոր բոլոր տարբերակների երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցությունների վերլուծությունը: Մասնավորապես՝ վերլուծել տնտեսության մրցունակության վրա արժույթային քաղաքականության ազդեցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը
2. «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը
3. ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիր 2002-2010թթ.
4. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրության տարեգիրք 2003; 2006; 2009; 2010
5. Հայաստանի ֆինանսական վիճակագրություն 2006, 2009
6. **Ն. Գրեգորի Մենքյու**, «Մակրոէկոնոմիկա»- Երևան, 1997
7. **Փ. Ա. Սամուելսոն, Ու. Դ. Նորդհաուս**, «Տնտեսագիտություն», մաս 1- Երևան, 1995
8. **С. Фишер, Р. Дорнбуш, Р. Пмалеви**, “Экономика”- Москва, 1999

АНАЛИЗ ВОЗДЕЙСТВИЯ ПЛАТЕЖНОГО БАЛАНСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА ИНФЛЯЦИЮ И ЭКОНОМИЧЕСКУЮ КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ В 1999-2010 ГОДЫ

С. В. АКОПЯН

Платежный баланс представляет экономические отношения между экономикой страны с внешним миром и может быть информационной базой в процессе формирования внешней и внутренней экономической политики и обеспечения стабильности цен. Анализ компонентов платежного баланса необходим для идентификации причин различных типов дисбаланса. Изучение платежного баланса также имеет важное значение для анализа конкурентоспособности экономики и зависимости страны от внешнего финансирования.

THE ANALYSIS OF THE IMPACT OF THE RA PAYMENT BALANCE ON INFLATION AND ECONOMIC COMPETENCY (1999-2010)

S. V. Hakobyan

The payment balance presents the economic relationship between domestic and foreign economies. In a way it is an information source in the context of developing the countries internal and external policy and providing price stability.

The analysis of the components of the payment balance is necessary for revealing the reasons of certain disbalances. It is important for the country's economic competency and analysis of nation's financial dependence on foreign countries as well.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԵՏ ԿԱՊԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ս. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ
ԳՊՀ լաբորանտ

Ներկայումս կենտրոնական բանկերի գործունեության հիմնական նպատակը, որպես կանոն, սահմանափակվում է դրամավարկային քաղաքականության իրականացմամբ և ֆինանսական հատվածի զարգացմանն աջակցությամբ: Միևնույն ժամանակ, հատկապես զարգացող երկրներում, կենտրոնական բանկերը դեռևս շարունակում են ստանձնել տնտեսության զարգացման խթանիչի դերը:

Սույն աշխատանքում փորձել ենք բացահայտել, թե ինչքանով է ՀՀ կենտրոնական բանկը խթանում տնտեսական աճին, ինչ համգամանքներ են խոչընդոտում արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացմանը և ուղիներ գտնել առկա հիմնախնդիրների լուծման ու դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար, խթանել տնտեսության իրական հատվածում երկարաժամկետ և մեծածավալ վարկային ներդրումները՝ ապահովելով տնտեսության հեռանկարային և կայուն զարգացումը:

Ուսումնասիրելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերջին տարիների վարած դրամավարկային քաղաքականության միտումները, ինչպես նաև վերջիններիս և տնտեսության իրական հատվածի կապերը՝ պարզ է դառնում, որ ՀՀ կենտրոնական բանկն 1999-2010թթ. մեկ միասնական մոդելով չի իրականացրել դրամավարկային քաղաքականությունը և դրա ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա միանշանակ չի եղել:

Դրամավարկային քաղաքականության՝ փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը, որը կիրառվել է Հայաստանում առաջին դրամավարկային քաղաքականության ընդունումից մինչև 2005թ. ներառյալ, ըստ էության